



Մ ՅԱԿՈԲԻ

Ն Ն Ր Ս Է Ն

* Ուր. 1 Ապրիլ.— Խ. օր Մեծ Պահոց: Առաւօտեան, Մայր Տաճարին մէջ կատարուեցան Մեծ Պահոց Արեւազալի վերջին, իսկ կէսօրէ ետք՝ «Առղայական» ժամերգութիւնները:

* Շր. 2 Ապրիլ.— Յիշատակ յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան:

— Վաղուան Ծաղկազարդի տօնին առիթով, կէսօրէ ետք, Ամեն. Պատրիարք Ս. Հօր զլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւն ու նախատօնակ՝ մեր վերնամատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբաւայրերու այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգչ. Տ. Հայկազուն Արդ. Մելգոնեան:

* Կիր. 3 Ապրիլ.— Ծաղկազարդ: Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան եւ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ժամարարն էր Հոգչ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուսյան: Ապա, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի զլխաւորութեամբ կատարուեցաւ մեծահանգէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղին շուրջ, որու ընթացքին կատարուեցաւ նաեւ «Անդաստան»: Թափօրականներ ձեռքերուն ունէին ձիթենիի եւ արմաւենիի ոստեր, իսկ մեր թափօրին կը հետեւէին Ղպտիներ եւ Ասորիներ: Ժամը 1ին, Վանք դարձին, Միաբանութիւնը «Որ զխորհուրդ քո զալստեան» շարականը երգելով Հայոց թաղի մուտքէն յառաջացաւ ու բարձրացաւ Պատրիարքարան, ուր Ն. Ամեն. Պատրիարք Հայրը «Պահպանիչ»ով օրհնեց ու արձակեց ժողովուրդը:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ «Անդաստան», յետոյ տօնին յատուկ հոգեգմայլ շարականներով ընդմիջուած երեկոյեան ժամերգութիւն, ապա Դոմքացէֆի սրտագրաւ արարողութիւնը, նախադահութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի: Հոգչ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան Աւագ Սեղանի բեմէն կարդաց անուանացանկը «Հոգեւոր սիրով եւ փափաքով» վարազոյր բացող տեղացի եւ ուխտաւոր բարեպաշտներուն եւ կոչ ըրաւ որ արարողութեան աւարտին ներկաները իրենց լուծանքէն բաժին հանեն Լիբանանի Ազունիէի Ազգ. բուժարանին: Այդ նպատակաւ պնակներ դրուած էին Տաճարի զոյգ մուտքերուն:

* Դշ. 5 Ապրիլ.— Աւագ Երեմիայի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի զաւթին արեւելակողմը գտնուող Ս. Յովհաննէս Աւե-

տարանիչի մատուռին մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան: Ս. Թարգմանչաց Երկրդ. Վարժարանի ուսանողութիւնը Ս. Հաղորդութիւն ստացաւ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբափայլերու այցելութեան թափօր Տաճարէն ներս, որու ընթացքին թափօրապետ Հոգշ. Տ. Ասպետ Արդ. Պալեան բացատրութիւններ տուաւ ուխտաւորներուն: Երթ ու դարձի թափօրները գլխաւորեց Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Եշ. 7 Ապրիլ.— Աւագ Հինգշաբթի (Յիշատակ Ընթրեաց Տեառն): Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ պաշտուած «Ապաշխարողաց» կարգէն ժամ մը ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Աւագ Սեղանին վրայ, որուն ընթացքին բաղմամբիւ հաւատացեալներ Ս. Հաղորդութիւն ստացան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ, Ամեն. Պատրիարք Ս. Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Ոտնալուա»ի արարողութիւն: Եկեղեցիի զոյգ դասերը դրաւ ինքն Եւրոպացի հիւրեր եւ պետական ղէմքեր, որոնց շարքին Քաղաքապետի փոխանորդը եւ Անկիլիքան Արքեպիսկոպոսը, որ, ըստ սովորութեան, եպիսկոպոսական զգեստաւորմամբ Աւագ Սեղանի բեմէն կարգաց Ոտնալուայի վերարեւելալ Ս. Աւետարանի համարները:

— Ժամ մը ետք, Հոգշ. Տ. Հայկասեր Վարդապետի գլխաւորութեամբ, փոքր թափօր մը այցելութեան գնաց Քրիստոսի զոյգ բանտերուն՝ Ս. Հրէշտակապետ եւ Ս. Փրկիչ: Առաջինին գաւիթին մէջ գտնուող Ս. Զիլինիին առջեւ եւ Ս. Փրկիչի մատուռին մէջ կատարուած Աւետարանական ընթերցումներէ ետք, Հոգշ. Հայրսուրբը խօսեցաւ Քրիստոսի շարժարանաց եւ Պետրոսի ուրացութեան մասին:

— Գիշերասկիզբին, Մայր Տաճարին մէջ սկսաւ «Պատարման կարգ»ը, որ տեւեց մինչեւ կէս գիշեր: Արարողութեան վերջին մասին, Գերշ. Տ. Շահէ Արք. Աճէմեան կուռ բարոյով մը վեր հանեց լազցի գիշերքուան փրկարար նշանակութիւնը: Ներկայ էր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը:

* Ուր. 8 Ապրիլ.— Աւագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան Տեառն): Կէսօրէ ետք, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ կատարուեցաւ «Խաչելութեան կարգ»ը, նախագահութեամբ Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Թաղման կարգ»ը, նախագահութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Շր. 9 Ապրիլ.— Աւագ Շաբաթ (Ճրագալոյց Ս. Զատիկի): Առաւօտեան ժամը 9-15ին, Լատիններու Լուսաւորեայի հանդիսութիւնէն ետք, փոքր թափօր մը, Աւագ Թարգման Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Նաղարեանի գլխաւորութեամբ, մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, կատարելու համար Տաճարի դրան բացման աւանդական ձեւակերպութիւնը:

— Ժամը 10-30ին, Ամեն. Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Մխարանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր կէս ժամ ետք, Ս. Գերեզմանի դրան կնքումով սկսան հանդիսութիւնները, Յոյներու Ս. Գերեզմանին չուրջ կատարած մեծահանգէս թափօրով եւ Լուսաւորեայի արարողութեամբ: Թափօրի աւարտին, իրենց հանդիսապետը՝ Գերշ. Տ. Ընթրմանու Եպիսկոպոս եւ մեր Լուսահանը՝ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան մտան Ս. Գերեզման, ուր կէս քանի մը վայրկեաններ ետք դուրս պիտի դար նուիրական լոյսը եւ տեղացի լուսակիրներու միջոցաւ պիտի փոխադրուէր մեր վերնատունը՝ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, որ Ս. Գերեզմանին նայող իր պատշգամէն պիտի օրհնէր Տաճարը խնուած բաղմալոյս ուխտաւոր եւ տեղացի հաւատացեալներու բաղմութիւնը: Անմիջապէս ընթացք կ'առնէ մեր թափօրը՝ գլխաւորութեամբ Լուսա-

հան չողչ. Տ. Սեւան Վարդապետի, եպիսկոպոսական զգեստաւորումով: Մեր թափօրին կը հետեւէին Ղպտիններու եւ Ասորիններու թափօրները: Վանք վերադարձին, հայ արիններու եւ արենոյշներու առաջնորդութեամբ եւ անոնց փողերսխումբերով Միաբանութիւնը յառաջացաւ դէպի Մայրավանք: Ճամբու կէսին, Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս եւ Լուսաւհան Հայրսուրբը զգեստաւորւեցան եւ «Քրիստոս յարեաւ» շարականը երգելով, նուիրական լոյսով մուտք գործեցին Մայր Տաճար:

— Ժամ մը ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ Ճրագալոյցի արարողութիւն, որուն աւարտին Աւագ Սեղանին վրայ իրիկնադէմի խորհրդաւոր ու յանկուցիչ Ս. Պատարագը մատուց չողչ. Տ. Ասպետ Արդ. Պալեան: Յարութեան հոգեգմայլ շարականներու ընդմէջէն բացուեցաւ վարագոյրը ի յայտ բերելով չքեղութիւնը տօնական օրերու հանդերձանքով դարդարուած Աւագ Խորանին: Ս. Զատիկի նախատօնականի նախադահեց Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գալիկեան, որմէ ետք «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնը զգեստաւորեալ բարձրացաւ սեղանատուն ընթրիքի, որուն մաս կը կազմէր Զատիկական աւանդական կարմիր հաւիթիւր:

* Կիր. 10 Ապրիլ. — ԶԱՏԻԿ ԶԱՐՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ: Գիշերուան ժամը 1ին, Մայրավանքի մեծ դանդը ոտքի է հանած արդէն Ս. Յակոբեանց Միաբանութիւնը, որ կէս ժամ ետք, Գերշ. Տ. Շահէ Արքեպս. Աճէմեանի զխաւորութեամբ եւ լուցեալ լապտերներով կը մեկնի Ս. Յարութեան Տաճար, ուր մեր վերնամաստունին մէջ կը պաշտօնին գիշերային ժամերգութիւնը եւ մաս մը առաւօտեան ժամերգութեանէն մինչեւ «Հարց», երբ Միաբանութիւնը զգեստաւորեալ կ'իջնէ Ս. Գերեզմանին շրջափակը երիցս թափօր դառնալով անոր չուրջ, հետեւողութեամբ Ղպտիններու եւ Ասորիններու թափօրներուն: Ս. Գերեզմանի դրան կարգացուած Իւղարբերից Աւետարանէն եւ «Անդաստան»էն ետք հանդիսաւոր Ս. Պատարագ կը մատուցուի Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ, որ կը ձայնասփռուի խորայնեան ռատիոկայանէն: Պատարագիչ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոս կը քարոզէ Քրիստոսի յարութեան խորհուրդին չուրջ: Վանք վերադարձին՝ Հայոց թաղի մուտքէն, առաջնորդութեամբ Հ. Ե. Միութեան արիններուն եւ արենոյշներուն, Միաբանութիւնը «Քրիստոս յարեաւ» շարականը երգելով կը յառաջանայ ու կը բարձրանայ Պատրիարքարան, ուր Ամեն. Պատրիարք Ս. Հայրը կը փակէ հանդիսութիւնը:

— Կէսօրէ ետք, Նորին Ամենապատուութեան նախադահութեամբ Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուեցաւ Զատիկական մեծ «Անդաստան»ը: Յետոյ, Մայր Տաճարի արտաքին զաւիթին մէջ կատարուեցաւ հոգեհանդստեան պաշտօն: Հայ ազգի հին թէ նոր բոլոր ննջեցեալներու հոգիներուն համար:

* Բշ. 11 Ապրիլ. — Բ. օր Ս. Զատիկի (Յիշատակ մեռելոց): Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ սեղանին վրայ մատուց եւ քարոզեց Ամեն. Պատրիարք Ս. Հայրը: Ինչպէս Աւագ Հինգշաբթի օրուան, Ճրագալոյցի երկկույսան եւ Ս. Զատիկի առաւօտեան, այնպէս ալ այսօրուան Ս. Պատարագին իր մասնակցութիւնը բերաւ Ս. Աթոռի երկսեռ երգչախումբը՝ զեկախարութեամբ Դպրապետ Պր. Սահակ Գալայճեանի: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մեծահանդէս թափօր Մայր Տաճարին մէջ, զխաւորութեամբ Ն. Ամենապատուութեան, որ ամպհովանի տակ, Կենաց Փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը լեցնող հոծ բազմութիւնը: Թափօրականներ ի ձեռն ունէին սուրբերու մասունքներ: Թափօրէն ետք, Միաբանութիւնը խմբուեցաւ դասին մէջ, ուր երգուեցաւ «Ճանապարհ» շարականը եւ «Տէր ողորմեա»: Յետոյ բոլորն ալ «Քրիստոս յարեաւ» եւ Ս. Աթոռի շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարանի դահլիճը, ուր Ս. Պատրիարք Հայրը Ս. Պատարագի

նշխար բաժնեց բոլորին, փակելով շարքը Աւագ Եօթնեակի Հանդիսութիւններուն:

* Գշ. 12 Ապրիլ.— Գ. օր Ս. Զատիկի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեան: Ապա Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան նախագահեց խնդրամատոյց ուխտաւորներու նընջեցեալներու հոգիներուն համար կատարուած հոգեհանգստեան պաշտօնին:

* Կիր. 17 Ապրիլ.— Նոր Կիրակի (Յիշատակի բիրաւար ցահատակացն մերոց յընթացս Ա. Համաշխարհային Պատերազմին): Ըստ սովորութեան, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ Ս. Պատարագ մատոյց եւ քարոզեց Լուսահանը՝ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան, բնարան ունենալով «Մի՛ զարհուրիք յայնցանէ որք սպանանեն զմարմինն»: Խօսեցաւ մեր ժողովուրդին պատահած ջարդին ու տեղահանութեան մասին, տալով նաեւ պատգամք մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն, որ է հաւատարիմ մնալ մեր եկեղեցիին, լեզուին, աւանդութիւններուն եւ ազգային սրբութիւններուն: Ս. Պատարագէն ետք, Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեանի գլխաւորութեամբ եւ առաջնորդութեամբ քաղաքիս բոլոր հայկական միութիւններու արիւններուն, արեւոյշներուն եւ զայլիկներուն, Միաբանութիւն եւ ցոռարարթիւ ժողովուրդ հանգստեան շարականներու երգեցողութեամբ ուղղուեցան դէպի Ս. Փրկչի ազգային գերեզմանատունը, ու խմբուեցան Արարայի նահատակաց յուշարձանին շուրջը, ուր հանգստեան կարգի աւարտին, Պր. Գէորգ Սեւեան կուռ ճառով մը խօսեցաւ մեր ազգին կրած անդարմանելի կորուստին մասին եւ կոչ քրաւ բոլորին որ միացնեն իրենց ճիգերը Հայ արդար դատի հետապնդման եւ բարւոք լուծման համար:

* Գշ. 19 Ապրիլ.— Ս. Կոյսի Աւետման Հանդիսաւոր նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս. Ասլանեան:

* Գշ. 20 Ապրիլ.— Աւետումն Ս. Աստուածածնի: Առտուն, գլխաւորութեամբ Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպիսկոպոսի, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի ձորը ու «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան, եպիսկոպոսական խոյր ի գլուխ:

* Շբ. 23 Ապրիլ.— Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխադիր: Ժամարարն էր Հոգշ. Տ. Գեղարդ Արդ. Տաւուշարեան:

— Կէսօրէ ետք, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեանի գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը մեր վերնամատուռին մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական սրբաւայրերու այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան:

* Կիր. 24 Ապրիլ.— Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային եւ առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատուռին մէջ: Ապա, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարիկեան մատոյց եպիսկոպոսական իր անդրանիկ Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ: «Ճաշու Գիրք»էն առաջ, Գերշ. Սրբազանը վարդապետական իշխանութեան գաւազան շնորհեց Ս. Աթոռի Միաբան Հոգշ. Տ. Ռուբէն Արդ. Յովակիմեանի: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Անդաստան», որ փակեց շարքը Զատիկան չրջանի Ս. Յարութեան Տաճարի հանդիսութիւններուն:

ՊԼՃՏՈՆԿԱՆԷ



* Դշ. 6 Ապրիլ.— Ամերիկայի Միացեալ Նահանգներու նախկին Փոս-Նա-խագահ Պր. Նէլսոնն Ռոքֆէլլըր Ս. Երկրի իր այցելութենէն օգտուելով՝ այցի եկաւ Ամեն. Պատրիարք Ս. Հօր:

* Բշ. 11 Ապրիլ.— Ս. Զատիկի տօնին առիթով, Նահանգային Կառավարիչ Պր. Ռաֆայէլ Լէվի, ընկերակցութեամբ Ոստիկանապետին եւ այլ պետական զէմքերու, այցի եկաւ Պատրիարքարան:

* Գշ. 12 Ապրիլ.— Նոյն առիթով, կէսօրէ առաջ, Ամեն. Պատրիարք Ս. Հայ-րը, ընկերակցութեամբ Գերշ. Սրբազաններու եւ Հոգշ. Հայրերու, շնորհաւորական այցելութեան զնաց Յունաց Պատրիարքարան, Փրանչիսկեաններու վանք եւ Լատինաց Պատրիարքարան: Ապա, ընկերակցութեամբ Գերշ. Տ. Շահէ Արքեպիսկոպոսի՝ այցելեց Պապական Նուիրակին եւ Անկլիքան Արքեպիսկոպոսին: Վերադարձին ընդունեց շնորհաւորական այցը Ասորիներու եւ Հապէշ-րու Եպիսկոպոսներուն, իրենց միաբանութեան անդամներուն հետ միատեղ: Իսկ Գերշ. Տ. Կիւրեղ Եպիսկոպոս, Հոգշ. Հայրերու ընկերակցութեամբ, այցելեց Կաթոլիկ եւ Բողոքական այլ յարանուանութիւններուն:

* Դշ. 13 Ապրիլ.— Նոյն առիթով, մինչեւ կէսօր, Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Յունաց Պատր. Փոխանորդը, Լատինաց Ս. Պատրիարքը, Փրանչիսկեաններու Գերշ. Կիւսթոսը, Անկլիքան Գերշ. Արքեպիսկոպոսը, Լուսեօբականներու եւ Արար Լուսեօբականներու Երէցները, Հայ Կաթոլիկներու եւ Մարոնիթ Համայնքի ներկայացուցիչները, Ռուս եւ Ռումանական եկեղեցիներու առաջնորդ Հայրերը եւ այլ ըարձրաստիճան հիւրեր: Ամենէն ետքը, Ն. Ամենապատուութիւնը ընդունեց շնորհաւորական այցը Քաղաքիս հիւպատոսական անձնակազմին:

* Եշ. 21 Ապրիլ.— Իսրայէլի անկախութեան 29րդ տարեդարձի առթիւ, կէսօրէ ետք, Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վսեմ. Թէտի Քօլլէքի կողմէ Դաւթի բերդին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Լուսարարապետ Գերշ. Տ. Հայրիկ Արք. Ասլանեան, Գերշ. Տ. Կիւրեղ Եպս. Գարեկեան եւ Հոգշ. Տ. Սեւան Վրդ. Ղարիպեան:

* Ուր. 22 Ապրիլ.— Ս. Երկիր այցելող Օտեսայի Եպիսկոպոսին ի պատիւ Ռուսերու վանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Կիւրեղ Եպս., Հոգշ. Տ. Սեւան Վրդ. եւ Տիար Գ. Հինդլեան:

* Ուր. 29 Ապրիլ.— Վիեննայի Ս. Ղազարի ասպետները այցելեցին Պատրիարքարան: